

եան, զոգի ի բռնին առեալ լեռնէ ի լեռոն, վանաց ի վանս իրրեւ փախըստական ոք յաւազակաց՝ դադար ուրեք խնդրէի ուր չհասանիցէ ախտն. վայ եկն ի գլուխս եւ հալեցայ մաշեցայ. թէպէտ կայ ամենեցուն միանգամ մեռանել, այլ ի պանդխտութեան ամենայն հանգամանք մահուան դառնանան յոյժ... Հարակրութիւն չատ կրեցի եւ կրեցից այլ եւս բազում»¹⁶⁵:

Հիւանդութենէ ազատ մնալու համար, որոշ չըջան մը Սարգիսեան կ'ապաստանի Առաքելոց վանքը. ճիշտ նոյն օրերուն Պոլսոյ կաթողիկէ պատրիարքը Գրպօ. Անտոն Հասունեան Մուշ կը ղրկէր Սերոբէ Վրդ. մը, քննելու համար տեղւոյ կացութիւնն ու քահանաներու միջեւ ծագած անհամաձայնութիւնը: Շատ չանցած Գրպօ. Հասունէն կը հասնի ազգարարութեան նամակ մը, որու պիտի պատասխանէ Սարգիսեան 1848 Ապրիլ 12ին, ոչ թէ իբր յանցաւոր մը ինքզինքը պաշտպանելու համար, այլ տալու ինչ ինչ լուսաբանութիւններ՝ իբր անմեղ ամբաստանեալ մը: Ծանօթներ ու բարեկամներ կու գան կատակելով հարցնելու Սարգիսեանի «եթէ դայս ինչ եւ դայն ո՛ւր դործեալ է քո, եւ ե՞րբ եւ դիմօրդ, դի թաղուն մնայ առ ի մէջը. քանզի Տէր Սերոբէ, ասեն, հարցանէ ցմեղ եթէ Հ. Ներսէս յեկեղեցիս հայոց փիլոնաւոր եւ վեղարաւոր կացեա՞լ իցէ, մատուցեա՞լ իցէ անդ պատարադ եւ խոստովանեա՞լ, եւ յեկեղեցիս ձեր քարոզ տուեա՞լ իցէ հակառակ եկեղեցւոյ վարդապետութեան... արդեօք Հ. Ներսէս յորդորեա՞լ իցէ դայս անխտիր լինել ընդ հայոց յիրս կրօնի եւ յաճախել յեկեղեցիս նոցա»: Կը զարմանայ ու կ'ալչի Սարգիսեան, թէ ի՞նչպէս այսքան զրպարտութիւն մէկ վայրկեանէն միւսը երեւան կ'ելլեն Մուշի նման քաղաքի մը մէջ, ուր «երեքօրեայ ճանապարհաց տարածութիւն է դաշտավայրիս, կ'ըսէ նոյն նամակին մէջ, եթէ դործ մի գործի թեթեւ եւ ոչ լսելոյ արժանի, միում աւուր ընդ ամենայն դաւառն հռչակի ի զարմացումն ամենեցուն»:

Հասած էր ժամանակը վերջնականապէս ձգելու Մուշը, ուր տառապած էր երկուքուկէս տարի (1845 Դեկտ. – 1848 Մայիս). նիւթական ու բարոյական զրկանքները մաշեցուցած էին զինքը մինչեւ ոսկրները:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

165. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 24 Յունուար 1848ին, առ Հ. Մովսէս Ամպէրպոյեան, Պոլիս: Ուրիշ նամակի մը մէջ Սարգիսեան կը գրէ. «Գիտես արդեօք զինչ տաղնապ էր զոր ի քօլէոայէ կրեցի աստ ի Մուշ եւ ի դաշտավայրն նորա մեծ տարածեցաւ առ հասարակ ախտն, ընդ բնակչացն սասանութեան զարհուրեցայ եւ ես, եւ ի լերինսն Տօրոսի տեղի անքոյթ... փախուցեալ թաքչէի. թէպէտեւ խնայեաց ինձ Տէր, այլ մաշեցան ոսկերքս ի զարհուրանաց» (Մուշէն, 24 Մարտ 1848ին, առ Հ. Պ. Մինասեան, Տրապիզոն):

ԿԻՐԱԿՈՍ ԾԱՂԿՈՂ

Նոր Զուղայի Ամենափրկչի վանքին ձեռագրաց արժէքաւոր հաւաքման մէջ, անտարակոյս, կարեւոր հայերէն ձեռագիրներէն մէկն է թիւ 481 Աւետարանը իր հայ մանրանկարչական արուեստին հարազատ զմայլելի մանրանկարներով, դործ տաղանդաւոր Կիրակոս ծաղկող վարպետին:

Երեւանի Մատենադարանին գլուխ դործոց Հաղբատի Աւետարանին (1211էն) մանրանկարչութեան պէս Նոր Զուղայի վանքին հաւաքման թիւ 481ին մանրանկարներն ալ այս Աւետարանը կը դարձնեն ժ. Դարու հայ մանրանկարչութեան անուրանալի գլուխ դործոց մը: Երեք անգամ առիթ ունեցայ այս սքանչելի արուեստի դործը անձամբ եւ ի մօտոյ ուսումնասիրելու, եւ ա՛յլ աւելի հաստատուեցայ այն համոզմանս վրայ՝ որ դեռ 1937ի քննութեանս ատեն կազմած էի:

Ընդհանրապէս հայ մանրանկարչութեան մասին գրողներ, ըլլան հայ թէ օտար, ժ. Դ. դարով սկսուած կը նկատեն հայ մանրանկարչական արուեստին անկումը: Կան որ կը շեշտեն ասիկա, ըսելով որ Թորոս Տարօնեցի Մեծ Հայաստանի մէջ եւ Սարգիս Պիծակ Կիլիկիոյ մէջ վերջակէտ դրին հայ մանրանկարչութեան արուեստին զարգացման: Ասիկա ոչ միայն անընդունելի է իր անճշտութեամբ, այլ պարզապէս ցոյց կու տայ այն հարեւանցի մերձեցումը, որով «դատել» փորձուած է հայ մանրանկարչութիւնը ժ. Դ. դարուն եւ անկէ վերջ ալ: Ոչ միայն հայ մանրանկարչութեան տաղանդաւոր վարպետներ՝ հայկական արուեստով զմայլելի մանրանկարչական դործեր թողուցած են մեզի ժ. Դ. դարուն եւ անկէ վերջ, այլ բազմաթիւն եւ իրապէս կարեւոր հայ մանրանկարչութեան կեդրոններ աներեւակայելի քաջութեամբ, անտանելի պայմաններու տակ շարունակած են արտադրել մանրանկարչական ամենաբնորոք դործեր, օրինակ Խիդան, Աղթամար: Աներեւակայելի կերպով կղզիացած անկիւններու մէջ մանրանկարչական մեծարժէք եւ դրաւիչ դործեր յղացուած են, որուն օրինակ է մեր հոս ներկայացնելիք Կիրակոս ծաղկողի կամ մանրանկարչի դործը:

Նախ տեսնենք Նոր Զուղայի թիւ 481 Աւետարանը իր յիշատակարաններով: Տեղական թուղթի վրայ գրուած Աւետարաններու սովորական երկսիւն 21 տողերով, բոլորգիր ձեռագիր մըն է, մինչեւ հիմա լաւ վիճակի մէջ: Ներկայ տոկուն կազմը հաւանաբար նախնական կազմը չէ:

Հոս տանք յիշատակարանները:

Թիւ 1 էջ 9ա. Կոստանդի եւ Աւագ տիկնոջ մանրանկարին (նկար թիւ 1) վրայ.

«Սրբոհի ա(ստուա)ծածախն:

Բարեխաւսեայ քո միածնին:

Յովաննու Կարապետին:

Յորովայնէ մեծ ծնընդին:

Աղաչանաւք ս(ուր)բ Մկրթ(տ)չին:

Յ(խու)ս որդի հաւր միածին:

Մաղթանս ընկալ վ(ա)ս(ն) նոցին:

Զկոստանդին: եւ զիւր կենակցին:

Արդարութեամբ մի դատեսցես:

Այլ զթուրթի(ւն) քո քաւեսցես»:

«Կոստանդն, աղաչեմք զքեզ փրկիչ, ողորմեայ ինձ բաղամեղիս»:

«Աւագ տիկին ողորմեայ ինձ, աղաչեմք»:

Թիւ 2, էջ 9բ. Կոստանդի եւ Աւագ տիկնոջ Ուլանէս որդին ձիու վրայ (մանր. թիւ 2): «ԶՈւլանէս ծաղկեալ զաւակս սոցա: Յիշեցէք ք(րիստո)ս եւ ա(ստուա)ծ զձեզ յիշէ ամէն, եւ զաներ սորա զտ(է)ր ստեփանոս զպատուական քահանայ. եղբայր սորա զաւտրակ յիշեսցիք ի ք(րիստո)ս եւ ա(ստուա)ծ զ(ձ)եզ յիշէ ամէն»:

Թիւ 3, էջ 10ա. Երկու նստած կիներու մանրանկարին վրայ (նկար թիւ 3): «Եւ զեղբարորդի սորա զՈհաննես: եւ զբարիբան եւ զպատուական տաւնական. զփես(ա)ս սորա յիշեսցիք ի ք(րիստո)ս: ամէն: զկենակիցն յովնիսի, զանիֆայ յիշեցէք ի Քր(իստո)ս ամէն զզաւակս սոցայ. զՊուանդ. եւ զիւր զաւակն զանդրանիկ տղէն զպաւղոս: յիշեցէք ի ք(րիստո)ս ամէն: Քուրն յովանիսի»:

Թիւ 4, էջ 6բ^է7ա. Կանոններու խորաններուն տակ կապոյտ յատակի վրայ գլխադիր զարդագրով: «ԶԿԻՐԱԿՈՍ ԾԱՂԿՈՂՍ ՅԻՇԵՑԻՔ Ի Ք(րիստո)Ս Ա(ստուա)Ծ ԶԶԵԶ (մանրատառ կապոյտ երեղէն դուրս) յիշէ, ամէն»:

Թիւ 5, էջ 88բ. զրչէն Մատթէոսի Աւետարանին վերջը: «Ով բարի ընթերցողք եւ լսողք յիշեցէք ի ք(րիստո)ս զստացող ս(ուր)բ աւետարանիս զԿոստանդ եւ զԱւագ տիկինն եւ զբարի զաւակսն իւրեանց զՅովաննէս եւ զՊուանդ խաթուն (տարբեր զրչով վրան յաւե-

լեալ «Զանիֆա»): եւ զմեղապարտ գրիչ Պ(ա)չ(ա)տ(ու)ր զի եւ թողութի(ւն) մեղաց լիցի սոցա, եւ ձեզ եւ մեզ, եւ մեր ծնողացն եւ ք(րիստոս)ի փառք յաւ(իտեանս)»:

Թիւ 6, էջ, 89ա. տարբեր զրչութեամբ «զՍտեփանոս ք(ահա)ն(այ) եւ զեղբայրն իւր զԱւտրակն եւ զնոցին կենակիցքն»:

Թիւ 7, էջ, 285բ. զրչէն գլխաւոր յիշատակարան: «Փառք քեզ անսահման անուն, եւ անդուգական անձնաւորութի(ւն). Հայր եւ որդի եւ ս(ուր)բ հոգի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն»:

«Որք ա(ստուա)ծային սիրոյն փափազեալ հետեւին, միշտ յարազուարճ բերկրանաւք խորհին յաւրէնս տ(եառ)ն ի տուէ եւ ի դիւշերի: Ըստ նմին աւրինակին սրբասէր եւ իմաստուն ճոխ տանուտէրս այս Կոստանդ, եւ հաւատարիմ կենակիցն իւր Աւագ տիկինն, միշտ եւ հանապաղ բորբոքէին ի սէր ս(ուր)բ եւ տիեզերաքարող քառավտակ ս(ուր)բ աւետարանիս: եւ ըստ բնաւոր բարուց բարոյն ախորժական մտաւք եւ մեծաւ տենչամբ, ի խալալ արդեանց ըստացաւ զսա, անջնջելի արձան եւ անմահ զաւակ. ի միւրթարութի(ւն) հոգւոց իւրեանց եւ ի յոյս փրկութե(ան) յաւուր յապագային. ամէն: այլ եւ ստացաւ զսա զաւակ ի սիրովն, եւ ընդանեակ յե(րուսաղէ)մ ի մայրն ամենեցուն վերինն սիրովն: եւ յիշատակ բարի ի յայսմ աշխարհի իւրեանց եւ նախնեաց իւրեանց եւ ամենաւրհնեալ բարի զաւակաց սոցին որդւոյն Յովաննիսի եւ դստերն Պուանդ խաթունի, եւ ամ(ենայն) արեան մերձաւորաց իւրեանց»:

«Եւ արդ ես յուշամեղս եւ փցունս ի գրչաց անպիտան Պ(ա)չ(ա)տ(ու)ր սուտ կր(օնաւոր): տեսեալ զփափակ եւ յսէր սոցա. յանձն առեալ ըստ իմում կարի. յանդ հանեալ կատարեցի զխնդիր սոցա շնորհաւք եւ ողորմութե(ամ)բն ա(ստուծո)յ գրեցաւ սա ի թուականիս Հայոց ԶՀԹ: (1330) ամի. ի զեւղս որ կոչի Լանկէն ընդ հովանեաւ ս(ուր)բ Յովաննիսի: ի հայրապետութե(ան) տ(եառ)ն Զաքարիայի: եւ ի յաշխարհակալութի(ւն) Բուսայիտի. ի դառն եւ ի վշտաբեր ժամանակի. որ հարկ կու տանք վ(ա)ս(ն) յ(խուս)ի: որ երբ նստի տ(է)ր(ունական)ն յատենի նա զհարկատուքն պսակի:

«Արդ աղաչեմ զամենէսեան սիրովն ա(ստուծո)յ որք հանդիպիք ոմա տեսութե(ամ)բ կամ ընթերնելով յիշեցէք ի ք(րիստո)ս զպարոն Կոստանդ եւ զհոգեւոր մայրն մեր զԱւագ եւ զորդեակն իւրեանց զՈւլանէս եւ զՊուանդ եւ սրտի մտաւք մեղաց թողութի(ւն) հայեցեցէք սոցա ի հաւրէն երկնաւորէ. եւ յորդւոյն միածնէ եւ ի հոգւոյն ճշմարտէ: որ է աւրհնեալ ամէն»:

«Դարձեալ կրկին աղաչեմ յիշել առ ք(րիստո)ս զպարոն Հազըրպետ եւ զմեր հոգեւոր մայրն զկենակից նորին հանդերձ ծաղկեալ զաւակովն իւրեանց. որ մեզ սպասարկեցին ի գրել աւետարանիս: զմեզ կերակրեցին, մեզ ծառայեցին, զմեզ լուացին եւ թափեցին յայս

ծայինս այս մատեան: ... Յանապատիս Արծկոյ վանս առձայնելոյ, ընդ հովանեաւ ս(ուր)բ մաւրս լուսոյ Ա(ստուա)ծածնի եւ ս(ուր)բ Նշանիս սքանչելադործի եւ այլ հաւաքեալ սրբոցս: Յառաջնորդութիւն) տեղւոյ Յոհաննէս հաւր: Ի ստացումն սրբադան ք(ա)հ(ա-նայ)ի Հայրնպետի կուսակրան արեղայի: յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնաւդաց իւրոց, եւ ամենայն արեան մերձաւորաց ի ք(րիստո)ս կատարելոց... ձեռամբ անպիտան դրչի Յովանի մեղապարտ քահանայի: Ի դառն եւ ի վշտաբեր ժամանակիս յորում վիշտս վտանկի եւ աղէտս տարակուսանաց յոքունս հասուցանելով ք(րիստո)սական ուժոյս աղգաց անաւրինաց ուրացելոց ի փառաց որդոյն Ա(ստուծո)յ: Նեղութ(եամ)բ: եւ տառապանաւք, հարկապահանջութ(եամ)բք, եւ այլանման ձաղանաւք...»: Կը խնդրուի յիշել նաեւ «Ընդ նմին եւ զՅորդանան կուսակրան արեղայ եւ զծնաւդսն իւր: Եւ զիս զանպիտան դրիչ եւ զծնողսն իմ...»:

Յովհաննէս քահանայ դրչի մասին ալ կենսադրական եւ ընտանեկան ծանօթութիւններ չկան: Ստուգում եւ նոյնացում բնական է դրեթէ անկարելի է բաղմամբիւ Յովհաննէս դրիչներու հետ, որ ծանօթ են ԺԴ. դարէն: Երեւանի թիւ 76 Մատուց Աստուածաշունչի գրութեան Արծկէ 1317ին Յոհ(աննէս) դրչէ: Այս երկու Յաւհաննէս եւ Յոհ(աննէս) դրիչները նոյնացուցած է Լեւոն Խաչիկեան (Յիշատակարաններ ԺԴ. դար, թիւ 169 եւ անուանցանկ) ըստ երեւոյթի կռուան ունենալով անոնց Արծկէ գրչութիւն ըրած ըլլալը: Սակայն պէտք է նկատել որ Հալէպի թիւ 33ը գրչին անունը ունի Յաւհաննէս, մինչ Երեւանի թիւ 76 ունի Յոհ(աննէս) եւ կայ յիշատակարանի ոճի տարբերութիւն:

Հալէպի թիւ 33ը գրչութեան վայր ցոյց կու տայ «Յանապատիս, Արծկոյ վանս առձայնելոյ, ընդ հովանեաւ ս(ուր)բ մաւրս լուսոյ Ա(ստուա)ծածնի եւ ս(ուր)բ Նշանիս սքանչելադործի եւ այլ հաւաքեալ սրբոցս»: Տեսանք նաեւ Յիշ. թիւ 1 որ մանրանկարողը ինքզինքը կը կոչէ Ձաւնապիտան ծաղկող ս(ուր)բ աւետարանիս զնուստ եւ սուտանուն Կիրակոս»: Որեւէ տարակոյս չի կրնար ըլլալ որ Ն. Զուղայի թիւ 481ին ծաղկող Կիրակոսը եւ Հալէպի թիւ 33ին ծաղկող Կիրակոսը նոյն քնձերը են: Ոչ միայն արուեստը, մանրանկարներու եւ խորանադարձերուն շարադրութիւնը, անուանալի նմանութիւն ունին, այլ նոյնիսկ գործածուած գոյները դրեթէ կրկնութիւն են իրարու: Մենք աւելի երկար պիտի խօսինք մանրանկարներուն մասին քիչ յետոյ իր կարգին:

Կիրակոս ծաղկող իր կարմրագիր յիշատակարանին մէջ (Հալէպի թիւ 33) կը յիշէ նաեւ «զվարդապետն իմ ուսեալ քահանայ»: Հոս «վարդապետ» գործածուած է իբր ուսուցիչ, դասատու, վարպետ: Ուսէպ կամ Յովսէփ քահանայ ծաղկող մը յիշուած կը գտնենք Նոր

Զուղայի թիւ 481 Աւետարանին մէջ սապէս. «... ըզՅովսէփ ծաղկող Սուրբ Աւետարանիս»: Գրչութիւնը կատարուած է Ռատակէս գրչէ Արտաղու Ս. Թադէոս վանքը, 1330ին: Դժբաղդաբար միայն անուան նմանութիւն պիտի չբաւէ այս Յովսէփ ծաղկողը նոյնացնելու համար «Ուսեպ քահանայ» վարպետին հետ:

* * *

Երեւանի թիւ 4817 Աւետարանը գրուած է «ի յանապատիս Ուռնկար կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ եւ յաղթող եւ աստուածընկալ սուրբ Նշանի, եւ սրբոյն Ստեփաննոսի եւ առաքելոյն Պետրոսի, ի յաշխարհակալութեանն Բուսայիտ զանին, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, ի յառաջնորդութեան տեղոյս կրանաւորի գրիչ Յովաննէս մեղապարտ»:

Արճէշի (Քաջբերունեաց) վանքերէն մին է Ուռնկարի վանքը:

Այսպէս Կիրակոս ծաղկողի երեք ծանօթ մանրանկարուած ձեռագիրներն ալ, երեքն ալ Աւետարան, Նոր Զուղայի թիւ 481, Հալէպի թիւ 33 եւ Երեւանի թիւ 4817, գրուած են Վասպուրականի մէջ: Լանկէն՝ թէ եւ իր բուն տեղով ինծի յայտնի չէ, եւ սակայն չէ կարելի կասկածիլ որ Վասպուրականի մէջ չըլլայ: Արծկէ եւ Ուռնկար գիտենք որ Վասպուրականի մէջ են: Այսպէս Վասպուրականի տարբեր վայրերու մէջ գրուած այս երեք Աւետարաններն ալ ծաղկուած կամ մանրանկարուած են նոյն ծաղկող Կիրակոսէն: Հաւանաբար ձեռագիրները իրեն բերուած են ծաղկուելու համար, սակայն թէ Կիրակոս ծաղկող ո՞ր կը բնակէր՝ յայտնի չէ:

Կիրակոս ծաղկողի երեք մանրանկարած Աւետարաններն ալ գրուած եւ ծաղկուած են նոյն ժամանակները: Նոր Զուղայի թիւ 481 գրուած է 1330ին, Հալէպի թիւ 33ը 1338ին, իսկ Երեւանի թիւ 4817 թուական չունի: Լեւոն Խաչիկեան կ'ըսէ որ «ձեռագրի գրութեան ամենավաղ հնարաւոր տարեթիւը 1318ն է»: (Յիշատակարաններ ԺԴ. դար, էջ 152, ծանօթ.): Ան իրաւամբ կ'ըսէ ատիկա քանի որ յիշատակարանին մէջ յիշուած Զաքարիա կաթողիկոսը Աղթամարի այդ անուամբ Ա.ն է, որ դահակալեց 1296-1336 թուականներուն, իսկ «Բուսայիդ» Ղանը գահակալեց 1318էն 1335: Իլ Ղան Բուսայիդ Արուսէյիդ (որդին Ղուգաբանդայի) տկար Ղան մը եղաւ:

Վաստակաւոր Լեւոն Խաչիկեանի 1318 «ամենավաղ» թուականը ընդունելով հանդերձ կրնանք թիւ 4817ին գրչութիւնը նշանակել ամենաուշ 1335 թուականն ալ, որով Երեւանի թիւ 4817 գրուած է 1318էն 1335ի միջեւ:

1. Ձեռ գիտեր ինչո՞ւ ձեռագրին եւ Յուսէփին «Լանկէն»ը Լեւոն Խաչիկեան իր Յիշատակարաններ ԺԴ. գրքուն մէջ (էջ 226) ըրած է «Լօնգէն»:

Ուռնկարի վանքին առաջնորդը կը յիշուի Երեւանի թիւ 4817ին մէջ՝ «Ղազար կրօնաւոր»։ Դարձեալ «ի յառաջնորդութեան տեղւոյս Ղազար կրօնաւորին» գրուած է Աւետարան մը ըստ Փիրղալէմեանի ԶԿԼ (1319) թուականին, նոյնպէս Տիրացու քահանայի համար Յովաննէս գրչէ։ Կը խորհիմ որ Երեւանի 4817 անթուական Աւետարանը նոյնն է Փիրղալէմեանի յիշած ԶԿԼ (1319) թուականով Աւետարանին հետ, որ ներկայացուած է Լեւոն Խաչիկեանէ ԺԴ. դարու Յիշատակարաններուն շարքին՝ իբր թիւ 198։ Գրիչ, ստացող, տեղ, յիշատակագրութեանց նմանութիւն տարակոյս չեն թողուր՝ որ ատենք նոյն Աւետարանին կը պատկանին։ Յիշատակարանը այժմ պակասաւոր Փիրղալէմեանի տեսած ատեն ունէր թուական ԶԿԼ (1319)։ Նոյն Աւետարանը ըլլալու է Երեւանի թիւ 4817, որ Լալայեան իր Վասպուրականի ցուցակին մէջ նշանակած է իբր թիւ 115, ԺԴ. դարուն գրուած նոյն տեղը, նոյն գրչէն, նոյն ստացողին համար։ Լեւոն Խաչիկեան ուշադիր չէ եղած այս նոյնացման ալ եւ Լալայեանի թիւ 115ը Յիշատակարաններուն շարքին իբր թիւ 334 ներկայացուցած է... , այս անգամ 1335էն շարքին մէջ, չեմ դիտեր ի՞նչ հիմքով։ Այսպէս ուրեմն Լեւոն Խաչիկեանի «Յիշատակարաններ ԺԴ. դարու» հատորին թիւ 198 եւ 334 պէտք է նոյնը նկատել թիւ 4817 Երեւանի Աւետարանին հետ։ Այժմ հարց է թէ ե՞րբ Փիրղալէմեան տեսած էր այս ձեռագիրը, հոն իրապէս կա՞ր իր նշանակած ԶԿԼ (1319) թուականը։ Եթէ կար այն ատեն Կիրակոս ծաղկողի մեղի ծանօթ կենաց շրջանը կրնանք 1319էն մինչեւ 1338 երկարել։

Այսքանով աւարտենք պատմական-ժամանակագրական մասը՝ ներկայացուած երեք ձեռագիր Աւետարաններուն եւ անցնինք Կիրակոս ծաղկողին մանրանկարչութեան։

* * *

Մեծ Հայաստանի հայկական մանրանկարչութիւնը բոլորովին կը տարբերի Կիլիկեան հայկական մանրանկարչութենէն իր արտայայտութեան սկզբունքով։ Կիլիկեան արուեստը կը զարգանայ բոլորովին տարբեր պայմաններու տակ եւ կը կիրարկէ արուեստը գործադրելու կերպ մը, որ գծի տեղ գոյն եւ ստուեր կը նախընտրէ, հետեւելով Մեծն Հայոց այն արուեստին որ Կարուց Աւետարանը արտադրեց եւ տուաւ Իզնատիոսի նման մանրանկարիչներ։

Վասպուրականի մանրանկարչութիւնը, ուր լոկ գծով արտայայտուելու արուեստով կը ներշնչուէր Սելջուք եւ Մոնղոլ արշաւանքներու բերած Մանիքէեան արուեստին սկզբունքէն։ Իսլամական արուեստը արդէն վերջնական երեւոյթ մը ստացած էր ԺԳ. դարուն սկիզբները եւ կ'արտադրէր Պաղտատի Դպրոցի պիտակին տակ, ու-

րուն մէկ գլուխ գործոցն է 1237էն (Ուասիտիի), որ կը պահուի Փարիզի Աղգային Մատենադարանին մէջ։ 1237 սակայն հնագոյն թուականն է, որ կարելի է տալ Պաղտատի Դպրոցին արտադրութեան։ Անտարակոյս ասկէ ալ առաջ գործած է եւ արտադրած այդ դպրոցը, սակայն մեզի կը պակսի վկայութիւն։ Կլոր, հեշտալուր գծերով այս արուեստը, իրապաշտ իր սկզբունքով արտայայտուելու համար կը նախընտրէ գիծը՝ քան թէ կիտուածած գոյները եւ անոնց պարտադրուած ստուերները։ Վերջինս կերպ մըն է որ նախընտրուած կ'երեւայ, Բիւզանդիոնէն սկսեալ, եւ արեւմուտքին մէջ, եւ որ ինչպէս ըսինք, յետոյ ԺԳ. դարէն ասդին կը գտնենք Կիլիկիոյ տաղանդաւոր մանրանկարիչներուն քով, սկսեալ Կոստանդինէ, Յովսէփէ, Թորոս Ռօսլինէ մինչեւ Սարգիս Պիծակ աւելի կամ նուազ կատարելութեամբ։

Սակայն ինչ որ զարմանալի է, մենք Պաղտատի Դպրոցի ըմբռնումով եւ աւելի հին թուականով, այսինքն 1237ին թուագրեալ Ուասիտիի գործէն աւելի հին գլուխ գործոց մը ունինք հայ մանրանկարչութեան մէջ, որ Հաղբատի սկզբունքներով, իրապաշտ, դրաւիչ, արուեստ մըն է Մարգարէի արուեստը՝ Հաղբատի Աւետարանին մէջ։ Ստիպողաբար կ'ուզեմ զգուշացնել որ խօսքս «Մանիքէեան արուեստի սկզբունքի» մասին է։ Մարգարէ «Հայացուցած» է ինչ որ ուզած է եւ ոչ թէ «օրինակած» կամ «կապկած»։ Եղա՞ծ են հայ մանրանկարիչներ, Մարգարէէն առաջ, որ այս ոճով արտայայտուած ըլլան։ Առ այժմ չէ կարելի ըսել, սակայն կրնանք ապահով կերպով ընդունիլ՝ որ գծով արտայայտուելու սկզբունքը կիրարկուած էր շատ կանոնաւոր հայ մանրանկարիչներէ, որոնց ընտիր մէկ օրինակն է Վենետիկի Միխիթարեանց մեծարժէք Աղբիանուպոլսոյ Աւետարանը 1007 թուականէն, ինչպէս նաեւ ԺԱ. դարու քանի մը աւետարանները ընդհանրապէս Վասպուրականի շրջանէն, ուր Աւետարանիչները լոկ ըստուերագծերով ներկայացուած են։ Այսքան կը բաւէ յիշած ըլլալու համար քանի մը օրինակ։ Նշանակենք որ վրացական մանրանկարչութեան ընտիր օրինակ մը կը պահուի այս մանրանկարչութեամբ Վրաստանի Գիտութեանց Ակադեմիայի մէջ Ա. 65 համարին տակ։

Ի՞նչպէս կամ ո՞ր ուղղութեամբ այս արուեստը ԺԳ. դարէն ըսկըսեալ վերստին զարգացաւ Հայոց մէջ։ Կարելի է խորհիլ որ իսլամական արուեստը միջնորդ եղած ըլլայ։ Սակայն քաջ ծանօթ է որ Սելջուքներուն Հայաստանի մէջ երեւալէն ալ շատ առաջ իսլամ արուեստը ծանօթ էր հայ արուեստագէտներուն։ Հայ եւ արաբ արուեստի յարաբերութիւնը վաղուց արդէն գոյութիւն ունէր։ Արաբական սրբազան «գիւֆի» գրաձեւերու ազդեցութեան օգտագործումը կը գտնենք Ժ-ԺԱ. դարէն երկաթագիր Յամայսապատումի մը մասերուն մէջ, որոնք կը գտնուին Բրինսդընի (Նիւ Ճըրդի, Միացեալ Նահանգ-

ներ) համալսարանը: «Գիւլֆի» զարգացրեցրու ոճով են շատ յաճախ դործածուած հայերէն գլխադիր զարգացրեց, որոնց կը հանդիպինք ԺԲ. եւ ԺԳ. դարու ձեռագիրներու մէջ: Անոնց կը հանդիպինք նաեւ Աւետարաններու կանոնական խորաններէն ոմանց մէջ՝ իբր զարգացրեց: Իբր խորան դործածուած է «Գիւլֆի» զարգացրեցրու շարք մը վրացական ձեռագիրն մէջ 1188էն: Ուրեմն դժուար է ըսել թէ Սելջուքներուն Հայաստան խուժելէն վերջ հայ աւատապետները սկսան դործածել արաբագիր թեւադատները, որոնք իբր պահպանիչ իրենց հաղուստին ուսէն քիչ վար բաղկամասերուն վրայ կը կրէին: Անոնց առաջին անգամ կը հանդիպինք Հաղբատի Աւետարանին գինի եւ ձուկ բերողներուն թեղանիքներուն վերնամասին վրայ: Աւելի վերջ ատիկա կը շարունակուի դործածուիլ ԺԴ. դարուն, ինչպէս կը տեսնենք Կիրակոս ծաղկողի մանրանկարած ձիաւորեալ Յովանէսի թեղանիքներու վրայ:

Հաղբատի Աւետարանին մանրանկարիչ մեծ վարպետ Մարգարէ՝ մինակը չէր արուեստի այդ ոճը զարգացնողը: Թորոս Տարօնեցի այդ ուղղութեամբ ընտիր վարպետ մը եղաւ թէեւ վերապահ: Ծայրայեղ էր Կիրակոս Թաւրիզեցի ծաղկողը՝ որ Նոր Զուլայի հաւաքման թիւ 47 Աւետարանը 1339ին այնքան ճոխ կերպով ծաղկեց:

Եթէ այլուր այս ոճով մանրանկարելը ժամանակաւոր եղաւ իբր նորութիւն, եւ Հաղբատի Աւետարանին մանրանկարիչ Մարգարէն, Թորոս Տարօնեցին եւ Կիրակոս Թաւրիզեցին հետեւողներ չունեցան, սակայն Վասպուրականի մէջ՝ ուր արդէն խորունկ կերպով հինէն արմատացած էր դժի կարեւորութիւնը, աւելի ու աւելի զարգացաւ հետզհետէ, բնիկ երանդ մը ստանալով արուեստի այս ոճը: Կիրակոս ծաղկող որոշ կերպով այդ ոճին մեծագոյն վարպետներէն մէկն էր:

Կիրակոս ծաղկող խիստ ժուժկալ է իր դիժերով: Ան զանոնք կը շարադրէ կատարեալ ըմբռնումով եւ անչեղ կերպով կը դործադրէ: Օրինակի համար դրակալը, որ պարանով մը կախուած կ'երեւայ վերէն, լոկ պարզ արտաքին դժերով կը ներկայացուի, տարբերութիւն չ'ըներ թէ աւետարանիչները զայն կը դործածեն կամ ոչ: Իսկ փայտեայ սեղանը՝ որուն վրայ կ'երեւան գրչութեան թանաք, մկրատ, ապակեսափորիկ, սահմանուած է բծախնդիր կերպով գծուած գիծերով, բոլորովին խորքէ դուրի: Ան հաւատարիմ է հայկական փայտափորագրական արուեստին կիրարկած դժաձեւերուն իր սեղանին համար: Աւետարանիչներուն թէ՛ ոտքերը եւ թէ՛ ձեռքերը ու դաստակները կատարելապէս ուսումնասիրուած են, եւ սակայն ամենաթուժկալ եւ պարզ միադիժերով զանոնք ձեւաւորած (նկար թիւ 10, 11):

Իր մանրանկարներէն տանուտէր Կոստանդ եւ Աւագտիկին գրծուած են նուրբօրէն, բայց վստահ եւ հաստատ ձեւերով: Արտայայ-

տիչ են աչքերը եւ երկուքին կերպարանքներն ալ կը մարմնացնեն ազնուական երեւոյթ մը: Կոստանդի մուշտակէ գլխանոցը եւ Աւագտիկինոյ շղարչեայ ուսնոցը կարծես չեչտեր են երկու անձնաւորութեանց ազնուական ըլլալուն: Անոնց ծնկադիր երեւոյթը կը յիշեցնէ Թորոս Տարօնեցի ծաղկողին մանրանկարները Գրիգորէսի եւ իր կնոջ Մամախաթունի, 1317ին դժուած (դունաւոր, Սիսական, էջ 134ի դէմ): Թարմ, կենդանի, աշխոյժ շարժում կայ ձիաւոր Յովանէսի մանրանկարին մէջ: Յովանէսի մուշտակեայ գլխարկին փետրաւոր ծոպէն սկսեալ, ձիուն հանդուցաւոր պոչը, ձիուն սրունքները իրապաշտութեան հաւատարիմ մնալով հանդերձ՝ Կիրակոս ծաղկող վարպետօրէն կրցած է ոճաւորում մը տալ անոնց, վստահ ատոր պատճառելիք տպաւորութեան վրայ: Կարելի չէ չդրաւորիլ ամբողջ մանրանկարին կենդանի գեղեցկութեան ի տես:

Յովհաննէսի կնոջ Անիֆայի եւ Յովհաննէսի քրոջ Խուանդ խաթունի մանրանկարները զմայլելի են իրենց շարադրութեան եւ պարզութեան մէջ: Անիֆա ծնկածալ նստած է թել մանելու գրադուած: Իր գլուխը եւ ուսերը ծածկող շղարչը նման է իր կետուրին դործածածին: Իր դիմաց նստած է Խուանդ խաթուն իր առջինէկ որդին՝ մանուկ Պօղոսը գրկած: Հանդարտութեան մարմնացում ունի մանրանկարը, երկու դեռատի հայ տիկիները գրադած առօրեայ տնական պարտականութիւններով: Հոս ալ ոչ մէկ դիժ վատնուած է: Կարիք չէ տեսնուած կենսականէն աւելի բան ըսել, նոյն ատեն մանրանկարին տրուած է ազնուական գեղեցկութիւն մը²:

Տնօրինական մանրանկարներէն շատ բան չէ մնացած Նոր Զուլայի վանքին թիւ 481 Աւետարանին մէջ: Աւելի ճիշտ միայն միւրտութեան մանրանկարը կայ հոն (նկար թիւ 6): Յարեւման է Հալէպի թիւ 33ի Մկրտութեան մանրանկարին հետ: Լաւ գծուած են, սակայն հոն կը պակսի այն արուեստը՝ որ Կիրակոս ծաղկող ինքնայորդ կերպով թափած է Աւետարանին ստացողին եւ իր ընտանեաց մանրանկարներուն վրայ:

2. Զարմանալիօրէն Խուանդ խաթունի մանրանկարին չափ յաջող եւ գրաւիչ չէ Կիրակոս ծաղկողի նոյն աւետարանին մէջ բոլորիչեան կարած Մարիամ Աստուածածնի մանրանկարը, Յիսուս մանկիկը գրկին, աթոռի մը վրայ նստած (նկար թիւ 8): Զոյս կերպով փայտափորագրեալ աթոռը, Աստուածածնի անթիւ անհամար ծալքերով հաղուստը կը զրկեն մանրանկարը իր վեհութենէն: Հակառակ որ պատկերագրական քիչ տարբերութիւն կայ Խուանդ խաթունի եւ Պօղոս մանկիկի մանրանկարին եւ Աստուածածնի մանրանկարին միջեւ, դարձեալ ճշխարհական մայր ու զաւակը կը գերազանցէ զարգանք մայր ու զաւակը իբր յաջող մանրանկար: Կիրակոս ծաղկող սակայն Աստուածածնայ մանրանկարին մէջ ալ ցոյց կու տայ իր անուրանալի կարող, փորձ, ուսումնասիրող վարպետ մը ըլլալը, կը բաւէ դիտել Աստուածածնի կիսածալ ձախ ձեռքը ծալուող ափին ետեւէն մատներուն երեւալը:

Սխառ ցաւարի է որ Հալէպի թիւ 33 ձեռագիրը, որուն մէջ Կիրակոս ծաղկող վեց տնօրինական բոլորէջեան մանրանկարներն ունի մնացած եւ միայն Յովհաննու աւետարանիչի մանրանկարը (Մատթէոս, Մարկոս եւ Ղուկաս վերջը ամբողջացուած են տարբեր ծաղկողէ, սկզբնախորաններուն հետ), լաւ վիճակի մէջ չըլլալով, ներկայանալի կերպով չեմ լուսանկարած։ Այսուհանդերձ եղած նկարները կը բաւեն ցոյց տալու համար՝ որ ատոնք Կիրակոս ծաղկողի հարազատ գործերն են։ Անուրանալի է, որ անոնց մէջ կը պակսի երեսակայութիւն եւ Կիրակոս ծաղկող զանոնք դժած է առանց ներշնչումի եւ զուրկ ինքնատիւ ըլլալու ցանկութենէ։ Անոնք աւելի յատակադիժեր կ'երեւան աւետարանական պատկերացումներով՝ մարդկային կերպարանքներով։ Կրնանք ըսել որ Կիրակոս ծաղկող բաւականացած է ինքզինքը օրինակելով։

Նկատելի է որ զոնէ ժ.Դ. դարուն սկիզբէն մեր մանրանկարչինքնքէն շատեր յարմար կը գտնեն իրենց մանրանկարներուն ոչ միայն խորագիրներ, անուանումներ տալով դոհանալ, ինչպէս ժ. դարէն սկսեալ յաճախ կ'ընէին, այլ նաեւ մանրանկարին իւրաքանչիւր անձ, խորհրդանշան, եւայլն անուանելու առանձինն։ Ասիկա տեւեց ժամանակ մը, դրեթէ մինչեւ ժ.Զ. դարու վերջը, մանաւանդ երբ մանրանկարը գոյներու չերտերով կ'իտուածուած է եւ ոսկին առատօրէն կը գործածուէր մանրանկարին մէջ, աւելի շլացնելու համար քան թէ դեղեցկացնելու։ Եւրոպայի մէջ ուղղակի փայտափորագրեալ տպագրուած գիրքերու պատկերատիպերուն մէջ անձեր եւ իրեր տխտղոսաւորելու այս կերպը, փորագրելին դործը աւելի հեշտացնելու համար Ա. Բ. Գ. եւայլն զլիսատաւերով փոխանակուեցաւ։ Քրիստոֆոր Վան Սիխէմ երէց ատիկա դործագրեց Անտվերը հրատարակուած Աստուածաշունչի մը մէջ, որուն փայտափորագրեալ պատկերատիպերը, մեծ մասամբ անարուեստ օրինակութիւններ են հին փայտափորագրիչ նշանաւոր վարպետներու, քանի մը տարի վերջ Ռսկան Երեսնցին գնեց Ամսդերտամ տպուած Աստուածաշունչին համար։

Կը ցաւիմ խոստովանելու որ Երեւանի 4817 Աւետարանին մէջ մնացած չորս աւետարանիչներուն մանրանկարները (միայն ասոնք մնացած են կ'ըսուի) չեմ ստուգած գիտնալով՝ թէ Կիրակոս ծաղկողի գործեր են, թէ վերանորոգողի մը յաւելումները։ Ըստ Մատենադարանի ցուցակին կը թուի թէ տնօրինական մանրանկարներ չկան հոն։

Կիրակոս ծաղկող ինչպէս Նոր Զուգայի Աւետարանին՝ նոյնպէս ալ Հալէպի Աւետարանին մէջ պարզապէս կրկնած է կանոններուն խորանագրերը չնչին տարբերութիւններով։ Ծաղկազարդ կամ առանց ծաղիկի տերեւաճիւղերը կ'երթան ետ մինչեւ Հաղբատի Աւետարանը (վերջ յիշուած վրացական Ակադեմիայի ձեռագիրը, Պաղտատի զպրոցի բուսական ծաղկումները)։



Թիւ 1.- Կոստանդին եւ Աւագ Տիկիմ



Թիւ 2.- Յովհաննէս որդիմ



Թիւ 3.- Անիփա, Խուանդ եւ Պաւղոս մանկիկ

Manuscript page 4 features a large, ornate table with two main columns of data. The table is framed by decorative arches and a large cross at the top. The text is written in Armenian script. The table is divided into several sections, with the top section containing a large cross and the bottom section containing a large number '24'.

Column 1	Column 2
1	2
3	4
5	6
7	8
9	10
11	12
13	14
15	16
17	18
19	20
21	22
23	24
25	26
27	28
29	30
31	32
33	34
35	36
37	38
39	40
41	42
43	44
45	46
47	48
49	50
51	52
53	54
55	56
57	58
59	60
61	62
63	64
65	66
67	68
69	70
71	72
73	74
75	76
77	78
79	80
81	82
83	84
85	86
87	88
89	90
91	92
93	94
95	96
97	98
99	100

Թիւ 4.- Կիրակոսի Յիշատակարան

Manuscript page 5 features a large, ornate table with two main columns of data. The table is framed by decorative arches and a large cross at the top. The text is written in Armenian script. The table is divided into several sections, with the top section containing a large cross and the bottom section containing a large number '24'.

Column 1	Column 2
1	2
3	4
5	6
7	8
9	10
11	12
13	14
15	16
17	18
19	20
21	22
23	24
25	26
27	28
29	30
31	32
33	34
35	36
37	38
39	40
41	42
43	44
45	46
47	48
49	50
51	52
53	54
55	56
57	58
59	60
61	62
63	64
65	66
67	68
69	70
71	72
73	74
75	76
77	78
79	80
81	82
83	84
85	86
87	88
89	90
91	92
93	94
95	96
97	98
99	100

Թիւ 5.- Կիրակոսի Յիշատակարան



Թիւ 6.- Մանրանկար վերտուրեան



Թիւ 7.- Աստուածածին եւ Յիսուս մանուկ



Թիւ 8.- Մարկոս Աւետարանիչ



Թիւ 9.- Յովհաննէս և Պաղտորոն



Թիւ 10.— Խորան Մատթէոսի




Թիւ 11.— Խորան Մարկոսի




Թիւ 12.- Խորան Յովհաննու



Թիւ 13.- Քրիստոսի Մուտքը Երուսաղէմ



Թիւ 14.—Հացի եւ ձուկի բազմացումը եւ Ղազարու յարութիւն



Թիւ 15.— Երեւ Մարիամներու այցը գերեզմանին

Ան աւելի երեւակայութիւն եւ կարողութիւն ցոյց կու տայ աւետարաններուն սկզբի իրապէս բարդ եւ նրբադիժ խորաններուն շարադրութեան եւ դժադրութեան մէջ (նկար թիւ 12, 13, 14) : Նրբաթել ժանեակներու հնադոյն այս ստեղծագործութիւնները անտարակոյս զինքը ընտիր ծաղկազարդող վարպետներուն շարքը կը դասեն :

Աւարտելէ առաջ՝ կրնամ եզրակացնել որ Կիրակոս ծաղկող տնօրինական պատկերացումներու մանրանկարիչ մը ըլլալէ աւելի ԱՇ-ԽԱՐՀԻԿ մանրանկարիչ մըն էր, ուր կրնար թէ՛ իր տաղանդը եւ թէ՛ ներշնչուելու կարողութիւնը ցոյց տալ գրաւիչ արուեստով : Խիստ վարպետ կ'երեւի իբր փայտափորագրիչ ծաղկազարդող մը, որ անտարակոյս կրնար ընտիր խաչքարերու, աշխարհիկ եւ կրօնական հաստատութեանց ծաղկազարդեր պատրաստել : Ո՛րքան շահեկան պիտի ըլլար եթէ իրմէ ունեցած ըլլայինք մանրանկարեալ Վարք Ազեֆ-սանդրի մը :

* * *

Ըսինք որ Կիրակոսի մանրանկարելու ոճը մեծ ընդունելութիւն դտաւ Վասպուրականի մէջ : Ոճը կասկած չկայ որ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ոճ մըն է բոլորովին եւ իր նմանը գոյութիւն չունի դրացի արուեստներուն մէջ : Այս ոճը իր ազդեցութեան տակ պահեց մեծ մանրանկարիչ վարպետներ, ԺՆ. դարուն մէջ Մինաս ծաղկողի կամ նկարողի նման : Իսկ ԺԶ. դարուն Յովսէփ Աղթամարցի, Գրիգորիս Կաթողիկոս Աղթամարցի (տաղասաց-ծաղկող) եւ Խիզանի դպրոցին վարպետներուն նման, որոնցմէ վերջ արուեստի ոճը կ'իջնէ հետզհետէ Չաքարիա Գնունեցիի, Չաքարիա Աւանցիի եւ կը հասնի Բուենց դպրոցի նման հեռաւոր անկիւններ :

ԺԷ. դարուն սկիզբը արդէն Յակոբ Զուղայեցիի, Մեսրոպ Խիզանցիի նման վարպետներ կը լքեն Վասպուրականի մանրանկարչական աւանդութիւնները մեծ չափով եւ կ'արտադրեն շատ, բայց քիչ որակով : Այլեւս հացի խնդիր է անոնց համար, մանրանկարները խրճողելը : Զբաւականանալով գոյներու շերտ շերտ անտեղի դիզումով, իրենց մանրանկարները կը ծեփեն նաեւ ոսկիով, խեղդելով այդպէս հարազատ արուեստը : Պատահաբար օր մը Մոնրէալի (Գանատա) Թանգարանը այցելութեանս, ցուցադրուած դտայ հայերէն՝ աւետարանէ մը փրցուած քանի մը թերթեր, որոնցմէ երեք հատը տնօրինական նկարներ էին : Կարելի չեղաւ գիտնալ ի՞նչ գրավաճառէ կամ հնավաճառէ գնուած էին, նախ քան Թանգարանին նուիրուիլը : Թանգարանը զանոնք նշանակած էր իբր ԺՆ. դարէ, մինչ մանրանկարները կարող էին նոյնիսկ ԺԳ. դարու երկրորդ կէսէն ըլլալ : Մանրանկարներէն մին ալ սխալ պիտակուած էր իբր «Շնացեալ կնոջ» պատմութիւնը, մինչ... Յարութիւն Ղազարու կը ներկայացնէր :

Մոնրէալի Թանգարանին երեք մանրանկարները (թիւ 15, 16, 17) ունին լաւ շարադրութիւն, վարպետի գծադրութիւն, սակայն տոնոյմէ աւելի բան մը՝ միամտութիւն մը, որ մանրանկարները շատ աւելի գրաւիչ կը դարձնէ քան թէ Կիրակոս ծաղկողի տնօրինական մանրանկարները: Անտարակոյս՝ ինծի անծանօթ այս մանրանկարիչը չունի Կիրակոս ծաղկողի գծելու փորձառութիւնը եւ վարպետութիւնը: Փոխանակ ուսումնասիրելով գծելու՝ կը ջանայ գծաձեւերը անյաջող կերպով յարմարցնել, այսուհանդերձ ընտիր մանրանկարիչ մըն է, որուն մանրանկարները հոգեկան դոհացում կու տան: Օրինակ Յիսուսի առջեւ գետնատարած Մարքան, Ղազարոսի քոյրը խօսուն, արտայայտիչ դիմագիծերով գրաւչօրէն կը ներկայացուի: Հասիս տպաւորիչ եւ յաջող մանրանկար մըն է Յիսուսի մուտքը Երուսաղէմ, որուն նայիլը շատ հաճոյք կը պատճառէ: Իբր մանրանկար երեւակայութեամբ, պարզ գեղեցկութեամբ, կշռուած շարադրութեամբ, յղացուած սքանչելի դործ մըն է Երեմի իւզաբեր կամանց Յիսուսի գերեզմանը այցելելը: Ան միշտ հաւատարիմ է նիւթին: Ինչ որ ալ ներկայացնէ, նուազագոյն գծերով ժուժկալօրէն կու տայ: Ժամանակուան ըմբռնումով նկարին մէջ ամէն բան անուանուած է աշխարհացոյցի մը վրայ նշանակուած ծովերու, լիճերու, լեռներու, քաղաքներու անուանումներուն նման: Սակայն կ'երեւի թէ ատիկա մոռցեր է կատարել Երեմի իւզաբեր կամանց Յիսուսի գերեզմանը այցելելու մանրանկարին վրայ: Ատիկա նկատելով՝ մարդ կը տարուի խորհելու, որ առանց անուանումներու մանրանկարները աւելի տըպաւորիչ, աւելի գեղեցիկ, նոյնիսկ աւելի «տնօրինական» կ'երեւին: Այսպէս ուրեմն պէտք է մերժել այն սխալ եւ անհիմն կարծիքը՝ որ հայ մանրանկարչութիւնը իր ստեղծագործական կարողութիւնը կը կորսնցնէ Թորոս Տարօնեցիէ եւ Սարգիս Պիծակէ վերջ: Ժ. Դարէն մինչեւ ԺԶ. դարու վերջը ընդհակառակը հայ մանրանկարչութիւնը զմայլելի յղացումներ եւ արտայայտութիւններ ունի առատօրէն, ատեն մը երբ քաղաքական ու տնտեսական պայմանները ա՛յնքան աննպաստ էին. ասիկա անասելի հրաշք մըն է: Երբ չուտով հրատարակուի, արդէն պատրաստ, Խիզանի գրչութեան մանրանկարչութեան դպրոցը մանրապատում գործս, կը խորհիմ որ այն ատեն ամէնէն թերահաւատներն աճգամ ստիպուած պիտի ըլլան հաւատալու հայկական «հրաշքին», զայն տեսանելի եւ չօշափելի դտնելով: Հայկական մանրանկարչութիւնը իր խորքին մէջ երբեք մոլորացածոյ չէ եղած, ինչպէս որ մոլորացածոյ չէ իր ճարտարապետութիւնը, քանդակագործութիւնը, երաժշտութիւնը, եւն.:

ԱԼ AL ET ԹՊՂԱՅ THEBGHA

Les deux espèces de démons les plus redoutées dans les classes populaires arméniennes jusqu'au XIX^e siècle étaient ԱԼ Al et ԹՊՂԱՅ (prononcé *thəpgha* en arménien oriental et *thəbgha* en arménien occidental). C'étaient les ennemis acharnés de la procréation humaine, qui s'attaquaient aux êtres les plus faibles: les femmes enceintes et les enfants, soit encore dans le sein de leur mère, soit en bas âge. Il est très difficile d'établir entre eux une discrimination, leurs attributions étant le plus souvent identiques.

Cependant, le nom de *al* ne peut désigner que le démon lui-même, et, comme celui de *սատանայ satana*, il peut parfois être mis au pluriel et désigner l'espèce, tandis que le nom de *thəpgha*, toujours employé au singulier, peut désigner soit le démon en personne soit ses principales manifestations, à savoir, d'une part le croup, et, dans ce sens, on emploie aussi le dérivé ԹՊՂԻ *thəpghi* ou *thəbghi* (de * ԹՊՂԱՅԻ *thəpghayi*), et d'autre part, selon le dictionnaire de Malkhassiants, la «mort des enfants encore dans le sein de leur mère, causée par les fils d'Al ou d'Alk (ԱԼԻ կամ ԱԼԵԻ որդիք)», les termes de cette dernière définition confirmant que *Thəpgha* et *Al* sont généralement confondus¹.

Du nom de *Thəpgha* dérivent, outre *thəpghi* «croup», — déjà cité, — ԹՊՂՈՍ *thəpghot* «atteint de *thəpgha*», ԹՊՂՈՍԻ *thəp-*

1. MALKHASSIANTZ, Dictionnaire, s. v. ԹՊՂԱՅ. La forme ԱԼԵ est un pluriel, mais la terminaison employée pour le génitif montre qu'elle est sentie comme un singulier. Dans d'autres cas, Malkhassiantz emploie le pluriel moderne ալեր *alker*).